

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 փետրվարի 2015 թ.

N 66-Ն

Բ. Ստեփանակերտ

ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ԿՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒԹՅԱՏՐԵՅԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 31-Ի N 330 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ, 4.1-ին, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածները և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ո ս ո մ է**.

1. Սահմանել մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների նորմատիվները մշակվում են այն վնասակար նյութերի համար, որոնց համար սահմանված են մթնոլորտում դրանց պարունակության առողջապահական, բնապահպանական կամ այլ նորմատիվներ: Եթե տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքում արտանետվում է նյութ, որի համար սահմանված չէ առողջապահական, բնապահպանական կամ այլ նորմատիվներ, ապա տնտեսավարող սուբյեկտը դիմում է լիազոր մարմնին՝ սահմանված կարգով տվյալ նյութի համար նորմատիվ մշակելու հայտով:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի N 471 որոշման համաձայն պետական հաշվառման ենթակա այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ) համար, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված «օդի պահանջվող օգտագործումը» (այսուհետ՝ ՕՊՕ) տարեկան կտրվածքով կազմում է երկու հարյուր միլիոնից մինչև երկու միլիարդ խորանարդ մետր, արտանետումների սահմանային չափաբանակներ են հանդիսանում դրանց գործունեության արդյունքում առաջացած փաստացի արտանետումները:

3) այն տնտեսավարող սուբյեկտների համար, որոնք ունեն արտանետման այնպիսի աղբյուրներ, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված ՕՊՕ-ն մեկ տարում

գերազանցում է երկու միլիարդ խորանարդ մետր չափանիշը կամ վայրկյանում գերազանցում է երկու հազար խորանարդ մետր չափանիշը, արտանետման չափաֆանակները որոշվում են սահմանային թույլատրելի արտանետումների (այսուհետ՝ ՍԹԱ) նորմատիվների նախագծերի հիման վրա, ընդ որում՝

ա. եթե ադոստոդ նյութերի արտանետումները ցրվելու արդյունքում գետնամերձ շերտում՝ արտանետվող կազմակերպության տարածքի եզրին և (կամ) ամենամոտ բնակելի տարածքներում, առաջացնում են այնպիսի խտություններ, որոնք սվյալ տարածքի ադոստովածության ֆոնային խտության հետ համատեղ չեն գերազանցում սահմանային թույլատրելի խտությունները (այսուհետ՝ ՍԹԽ), ապա ՍԹԱ նորմատիվները համարվում են ընդունելի և հանդիսանում են արտանետումների սահմանային չափաֆանակներ (արտանետման թույլտվություններ),

բ. եթե արտանետումների արդյունքում ձևավորված ադոստոդ նյութերի գետնամերձ խտությունները սվյալ տարածքի ադոստովածության ֆոնային խտության հետ համատեղ արտանետվող կազմակերպության տարածքի եզրին և (կամ) ամենամոտ բնակելի տարածքներում գերազանցում են համապատասխան ՍԹԽ, իսկ սվյալ նյութերի ֆոնային ադոստովածությունը չի գերազանցում ՍԹԽ, ապա մշակվում է մթնոլորտ ադոստոդ նյութերի արտանետումների նվազեցման միջոցառումների ծրագիր, որի իրականացումը կապահովի ՍԹԱ նորմատիվներին հասնելը,

գ. եթե տնտեսավարող սուբյեկտի արտանետումներում առկա որոշ նյութերի համար ֆոնային ադոստովածությունը գերազանցում է համապատասխան ՍԹԽ-ն, ապա ՍԹԱ նորմատիվներն ընդունվում են որպես ժամանակավոր: Ժամանակավոր նորմատիվները գործում են մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից վնասակար նյութերով ֆոնային գերադոստովածություն ունեցող տարածքներում սահմանված կարգով տարածֆային նորմատիվման իրականացման հիման վրա նոր չափաֆանակների տրամադրումը:

3. Սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններում սահմանված դեպքերում արտանետման չափաֆանակները տրամադրվում են ՍԹԱ նորմատիվների չափով:

4. Սահմանել, որ՝

1) մթնոլորտային օդն ադոստոդ նյութերի ՍԹԱ նորմատիվները մթնոլորտային օդի ադոստման անւարժ աղբյուրների համար մշակում են այդպիսի աղբյուրներ ունեցող տնտեսավարող սուբյեկտները.

2) տրամադրված արտանետման չափաֆանակները մնում են ուժի մեջ, քանի դեռ ադոստման անւարժ աղբյուրների և ադոստոդ նյութերի մասով քանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև սվյալ նյութերով ֆոնային գերնորմատիվային ադոստովածություն չի առաջացել: Ֆոնային գերնորմատիվային ադոստովածության առաջացման հետ կապված արտանետման չափաֆանակները վերանայվում են տրամադրման պահից 5 տարուց ոչ ւուս.

3) տեղաբնի ֆոնային ադոստովածության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝ տեղադրելով այն իր պաշտոնական կայքում: Եթե սվյալ տարածքի համար ֆոնային ադոստովածության սվյալները բացակայում են, ապա ֆոնային ադոստովածությունը սահմանվում է սվյալ բնակավայրի բնակչության թվից ելնելով.

4) նոր կառուցվող, ընդլայնվող և վերակառուցվող օբյեկտների համար արտանետման չափաֆանակները սահմանվում են այդ օբյեկտները սահմանված կարգով շահագործման հանձնելու օրվանից 7 օրվա ընթացքում՝ մեկ տարի ժամկետով դրանց կառուցման, ընդլայնման և վերակառուցման նախագծային լուծումների հիման վրա: Այնուհետև, կապված արտանետումների հզորություններից կամ ծավալից, սույն որոշման 2-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետերին համապատասխան:

5. Ուժը կորցրած ֆանաչել Լեռնային Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 31-ի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին» N 330 որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վաթսուներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕԳՆ ԱՂՏՈՏՈՂ ԿՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅՂԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ**

1. Մթնալորտային օդն ադտատող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերը (այսուհետ՝ նախագիծ) մշակում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն (այսուհետ՝ վարչություն) ֆիննության են ներկայացնում սույն որոշման 4-րդ կետում նշված պայմանին բավարարող կազմակերպությունները՝ սույն կարգի սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվների (չափաֆանակների) նախագծերի կազմի ու բովանդակության ուղեցույցին համապատասխան: Օդի պահանջվող օգտագործումը (այսուհետ՝ ՕՊՕ) հաշվարկվում է ըստ սույն կարգի 7-րդ կետի բանաձևի:

2. Նախագիծն ուղեկցող նամակի (հայտի) հետ միասին ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով՝ այն տեղադրելով վարչության ինտերնետային կայքում՝ այդ մասին ծանուցելով վարչության bvarchutyun@mail.ru էլեկտրոնային հասցեով:

3. Վարչությունը սույն կարգի 2-րդ կետում նշված կայքում նախագծի տեղադրման մասին ծանուցման օրվանից 30-օրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը ներկայացված նախագծի ֆիննության արդյունքների մասին՝

1) նախագծի վերաբերյալ դիտողությունների բացակայության դեպքում՝ նախագծում ներկայացված արտանետումների նորմատիվների ընդունման վերաբերյալ, որոնք դիտարկվում են որպես տվյալ կազմակերպությանը տրամադրված արտանետման չափաֆանակներ (արտանետման թույլտվություններ): Գրությանը կից ներկայացվում է նաև լիազոր մարմնի կողմից ստորագրված և կնքված ֆաղվածք՝ «Սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվների (չափաֆանակների)» նախագծի թիվ 6 աղյուսակը (ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ԿՅՈՒԹԵՐ ՄԹՆՈՂՈՐՏ ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ (ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԹՈՒՅՂՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ)):

2) նախագծի վերաբերյալ դիտողությունների առկայության դեպքում թվարկվում են դիտողությունները և դրանց իրավական հիմքերը, և նախագիծը վերադարձվում է լրամշակման:

4. Լրամշակված նախագիծը կրկին ներկայացվում է ֆիննության սույն կարգով նախատեսված ընթացակարգով:

5. Տրամադրված արտանետման չափաֆանակները մնում են ուժի մեջ, քանի դեռ աղտոտման անժամապատասխանությունների և աղտոտող նյութերի մասով ֆանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև տվյալ նյութերով ֆոնային գերնորմատիվային աղտոտվածություն չի առաջացել: Վերը նշված փոփոխությունների դեպքում տնտեսավարող սուբյեկտը մշակում է նոր նախագիծ և սույն կարգի համաձայն ներկայացնում է ֆննությամբ:

6. Եթե 30 օրվա ընթացքում վարչությունը գրավոր չի պատասխանում կազմակերպությանը, ապա նախագծում ներկայացված արտանետումների նորմատիվները համարվում են ընդունված:

7. ՕՊՕ-ն մեկ տարում կամ մեկ վայրկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$O_{\text{ՊՕ}} = \sum_i^n \frac{A_i}{U_{\text{ԹԿ}_i}}$$

որտեղ՝

A_i -ն յուրաքանչյուրը՝ i -րդ նյութի առավելագույն արտանետումն է համապատասխանաբար մեկ տարում կամ վայրկյանում ըստ տեխնոլոգիական ռեգլամենտի (միլիգրամ/տարի կամ միլիգրամ/վայրկյան),

$U_{\text{ԹԿ}_i}$ -ի՝ i - րդ նյութի համապատասխանաբար միջին օրական կամ առավելագույն միանվագ սահմանային թույլատրելի խտությունն է (միլիգրամ/մետր խորանարդ):

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅՂԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՍԹԱ) ԼՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ (ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ) ԼԱՆԱԳԾԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

1. Տխտոսաբերքը հանդիսանում է նախագծի առաջին էջը և ձևավորվում է համաձայն կցված օրինակելի ձևի:

2. Կատարողների ցուցակը տեղադրվում է տխտոսաբերքի 2-րդ էջում: Ցուցակում նշվում են կազմակերպությունները և բոլոր պատասխանատու կատարողների, համակատարողների ազգանունները, որոնք մասնակցել են նախագծի մշակման աշխատանքներին: Ձախ մասում նշվում են պաշտոնը, գիտական կոչումը, աջից՝ ազգանունը: Յուրաքանչյուր ազգանվան կողմից, փակագծերի մեջ նշվում է նրա պատրաստած բաժնի համարը:

3. Անոտացիան պետք է պարունակի կատարված աշխատանքի հիմնական արդյունքները. ադատող նյութերի անվանումները և արտանետման տարեկան քանակները, վնասակար գումարային ազդեցությամբ օժտված նյութերը, նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (այսուհետ՝ ՍԹԱ) նորմատիվներին հասնելու ժամկետները և դրա համար անհրաժեշտ ծախսերը, կազմակերպության կողմից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը:

4. Նախագծի բովանդակությունը պետք է պարունակի բոլոր բաժինների և հավելվածների անվանումները՝ համապատասխան էջերի նշումով:

5. Կազմակերպության մասին ընդհանուր տեղեկությունները ներառում են՝

1) տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, արտադրահրապարակների քանակը, արտադրահրապարակի և սահմանակից օբյեկտների, բնակելի զանգվածների, արդյունաբերական գոտիների, անտառների, գյուղատնտեսական ցանքատարածությունների, տրանսպորտային մագիստրալների փոխդասավորվածության մասին տեղեկությունները.

2) տնտեսավարող սուբյեկտի ֆարտեզ-սխեման՝ մթնոլորտն աղտոտող աղբյուրների նշումով.

3) տնտեսավարող սուբյեկտի տեղանքի իրավիճակային ֆարտեզը՝ բնակելի տարածքների, այդ թվում՝ հանգստի գոտիների, հանգստյան տների, մանկապարտեզների, դպրոցների, հիվանդանոցների նշումով:

6. Տնտեսավարող սուբյեկտի բնութագիրը՝ որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր ներառում է՝

1) արտադրության տեխնոլոգիայի նկարագրությունը և կիրառվող սարքավորումների հակիրճ բնութագիրը մթնոլորտի աղտոտման տեսակետից, ինչպես նաև տեղեկատվություն արտադրանքի, հիմնական հումքի, հիմնական և պահուստային վառելիքի վերաբերյալ.

2) գոյություն ունեցող փոշեգազամաքման սարքավորումների հակիրճ բնութագիրը, դրանց տեխնիկական վիճակի և աշխատանքի արդյունավետության ընդհանրացված վերլուծությունը.

3) օգտագործվող տեխնոլոգիայի, տեխնոլոգիական և փոշեգազամաքման սարքավորումների արդիականության և տվյալ արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվություն.

4) տնտեսավարող սուբյեկտի հեռանկարային զարգացումը՝

ա. ներկայացվում են տեղեկատվություն վերակառուցման, ընդլայնման, տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման, վերապրոֆիլավորման, կոնսերվացման, տեղափոխման կամ լուծարման մասին որոշումները,

բ. կատարվում է հղում այն փաստաթղթերին, որոնք որոշում են զարգացման հեռանկարը՝ վերակառուցման, ընդլայնման և նոր շինարարության նախագծի առկայությունը, դրանց բնապահպանական փորձաքննության արդյունքները կամ ընթացքը.

5) մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը բերվում է ստորև ներկայացված աղյուսակ 1-ի տեսքով՝

ԱՂՅՈՒՍԱԿ 1.

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը

Նյութի անվանումը	ՄԹԽ միանգամյա առավելագույն, մգ/մ ³	Նյութի արտանետումը, ա/տարի
1	2	3

Աղյուսակի տակ նշվում են նաև գումարային վնասակար ազդեցությամբ օժտված նյութերը:

Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների ֆանակությունները (3-րդ սյունակ) յուրաքանչյուր նյութի համար հաշվարկվում են՝ ելնելով տնտեսավարող սուբյեկտի աշխատանքային ռեժիմից, տեխնոլոգիական գործընթացների և սարքավորումների շահագործման ցուցանիշներից, հումքի և վառելիքի սպառման ֆանակներից՝ տարեկան կտրվածքով.

6) զարկային արտանետումների բնութագիրը ներառում է զարկային արտանետումների առաջացման պայմանների կարճ բնութագրերը: Զարկային արտանետումները նշվում են ստորև ներկայացված աղյուսակ 2-ի տեսքով, դրանք չեն ընդգրկվում աղյուսակ 1-ում: Զարկային արտանետումները հաշվի են առնվում միայն արտանետման չափաբանակներում տարեկան կտրվածքով: Դրանց համար չի իրականացվում ցրման հաշվարկ և

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները ֆարտեզ-սխեմայում, մ				Գագամաբան սարքերի անվանումը		Մաքրման ենթակա նյութերը		Մաքրման միջին աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2-րդ ծայրի				Ապահովվածության գործակիցը, %		Մաքրման առավելագույն չափը, %	
Ն.Վ.	Հ	X ₁	Y ₁	X ₂	Y ₂	Ն.Վ.	Հ	Ն.Վ.	Հ	Ն.Վ.	Հ
11	12	23	24	25	26	27	28	29	30	31	32

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ՍԹԱ հասնելու տարին
			Ն.Վ.			Հ (ՍԹԱ)			
Ն.Վ.	Հ		գ/լրկ	մգ/մ ³	տ/տարի	գ/լրկ	մգ/մ ³	տ/տարի	
11	12	33	34	35	36	37	38	39	40

որտեղ՝

Ն.Վ.՝ ներկա վիճակ, Հ՝ հետահյար

8) ՍԹԱ նորմատիվների (չափաֆանակների) հաշվարկի համար անհրաժեշտ էլակետային տվյալների հավաստիության և լիարժեքության հիմնավորման համար նկարագրվում են ներկայացված տվյալների սկզբնաղբյուրները, այն է՝ գործիքային չափումներ կամ հաշվարկային ու հաշվեկշռային եղանակ: Նշվում են մեթոդական փաստաթղթերի անվանումները, որոնց հիման վրա կատարվել են աղտոտող նյութերի արտանետումների վերլուծությունը, ընտրությունը և հաշվարկը:

7. Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը ներառում է՝

1) օդերևութաբանական բնութագիրը և բնակավայրի մթնոլորտում աղտոտող նյութերի ցրման պայմանները որսուղ գործակիցներն աղյուսակ 4-ի տեսքով:

ԱՂԹՈՒՍԱԿ 4.

Օդերևութաբանական բնութագիրը և գործակիցները, որոնք բնորոշում են բնակելի տարածքի մթնոլորտում վնասակար նյութերի ցրման պայմանները

Բնութագրերի անվանումները	Մեծությունը
Մթնոլորտի շերտադասավորությունից կախված գործակիցը, A	200
Տեղանքի ռելիեֆի գործակիցը (հաշվարկվում է համաձայն կողմնորոշչի)	
Տարվա ամենաժամային ամսվա առավելագույն միջին ջերմաստիճանը T °C (բերվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության կայքից կամ սահմանված կարգով տրվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության հգնաժամային կառավարման կենտրոնի կողմից):	
Միջին տարեկան «ֆանիների վարդը» %-ով (բերվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության կայքից կամ սահմանված կարգով տրվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության հգնաժամային կառավարման կենտրոնի կողմից):	
Հյուսիս	
Հյուսիս-արևելք	
Արևելք	
Հարավ-արևելք	
Հարավ	
Հարավ-արևմուտք	
Արևմուտք	
Հյուսիս-արևմուտք	
Քամու արագությունը (բազմաձև տվյալների միջինը), որի կրկնելիության գերազանցումը կազմում է 5% , մ/վրկ	

2) Առանձին հավելվածով ներկայացվում է վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը, որը կատարվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության մասնագիտացված կառույցի կողմից: Վնասակար նյութերի ցրման հաշվարկի մակերեսը պետք է ընդգրկի մինչև **0,05** սահմանային թույլատրելի խտության (այսուհետ՝ ՍԹԽ) աղտոտվածությամբ տարածքները, ընդ որում, արտանետման աղբյուրները պետք է տեղադրվեն ցրման հաշվարկի համար ընդունված մակերեսի կենտրոնական մասում, իսկ ցանցի ֆայլը պետք է թույլ տա գնահատել աղտոտվածությունը արտանետող կազմակերպության տարածքի եզրին և (կամ) ամենամոտ բնակելի տարածքներում:

Եթե նախատեսված է արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր, ապա ներկայացվում է նաև միջոցառումն իրականացնելուց հետո ենթադրվող արտանետման չափաֆանակի վրա հիմնված հաշվարկը:

8. ՍԹԱ նորմատիվների որոշումը, արտանետումների չափաֆանակների առաջարկը ներառում է՝

1) տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշված ՍԹԱ նորմատիվները, որոնք առաջարկվում են որպես արտանետումների չափաֆանակներ, եթե ադոտտող նյութերի արտանետումները ցրվելու արդյունքում գետնամերձ շերտում առաջացած խտությունները սվյալ տարածքի ֆոնային ադոտտվածության խտությունների հետ համատեղ չեն գերազանցում ՍԹԽ:

2) տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված մթնոլորտ ադոտտող նյութերի արտանետումների նվազեցման միջոցառումների ծրագիրը, որը մշակվում է այն դեպքում, եթե արտանետումների արդյունքում ձևավորված ադոտտող նյութերի գետնամերձ խտությունները գերազանցում են համապատասխան ՍԹԽ: Միջոցառումների իրականացումը պետք է ապահովի ՍԹԱ նորմատիվներին հասնելը: Այս դեպքում արտանետման չափաֆանակներն առաջարկվում են ՍԹԱ նորմատիվների չափով:

Միջոցառումների ծրագիրը ներկայացվում է աղյուսակ 5-ի տեսքով:

Եթե ֆոնային ադոտտվածության խտությունները գերազանցում են ՍԹԽ-ն, ապա ՍԹԱ նորմատիվներն ընդունվում են որպես ժամանակավոր: Այս դեպքում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանն իրավունք է վերապահվում, տարածքի գերադոտտվածության հետ կապված, վերանայել դրանք և սահմանել ավելի ցածր չափաֆանակներ:

Տվյալ տեղանքի ֆոնային ադոտտվածության վերաբերյալ տեղեկատվությունն ստացվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կալիք: Եթե սվյալ բնակելի տարածքի համար համապատասխան տեղեկատվությունը ֆոնային ադոտտվածության վերաբերյալ բացակայում է, և այդ տարածքում բացակայում են զգալի յուրահատուկ արդյունաբերական ադոտտման աղբյուրներ, ապա 250000 մարդուց պակաս բնակելի տարածքների համար ֆոնային ադոտտվածության խտություններն ամենատարածված ադոտտող նյութերի համար ընդունվում են՝ ծծմբի երկօքսիդի համար՝ 0,1 միլիգրամ/մետր խորանարդ, ազոտի օքսիդների համար՝ 0,03 միլիգրամ/մետր խորանարդ, ածխածնի օքսիդի համար՝ 1,5 միլիգրամ/մետր խորանարդ, չտարբերակված ածխածնի օքսիդի համար՝ 0,2 միլիգրամ/մետր խորանարդ:

ԱՂՅՈՒՍԱԿ 5.

ՍԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր

NN ը/կ	Միջոցառման անվանումը և ադտտման աղբյուրի համարը	Իրակա- նացման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը միջոցառումն իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

9. Առաջարկվող արտանետման չափաֆանակները հանդիսանում են նախագծի անբաժանելի մասը: Ներկայացվում են աղյուսակ 6-ի տեսքով.

ԱՂՅՈՒՍԱԿ 6.

**ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈՒՐՏ ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը) ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ (ԱՐՏԱՆԵՏՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Ադտտող նյութը	Ընդհանուր արտանետումը		Ադտտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ/վրկ	տ/տարի		գ/վրկ	տ/տարի

Յուրաֆանչյուր առանձին աղբյուրից մթնոլորտ արտանետվող ադտտող նյութերի ֆանակությունները նշված են սույն ՍԹԱ նորմատիվների նախագծում, որը հանդիսանում է սույն չափաֆանակների անբաժանելի մասը:

10. Անբաբենպաստ կլիմայական պայմանների ժամանակ ներկայացվում է արտանետումների կարգավորման յուրաֆանչյուր կռնկրետ միջոցառման հակիրն նկարագրությունը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական սարֆավարումների շահագործման իրական պայմանները, միջոցառման ժամանակ արտանետումների կարգավորման (նվազեցման) հիմնավորումը:

11. Գրականության ցանկը պետք է ներառի ՍԹԱ նորմատիվների նախագծի մշակման ընթացքում օգտագործված բոլոր աղբյուրների անվանացանկը:

Կ Ո Ղ Մ Ն Ո Ր Ո Շ Ի Չ

ՏԵՂԱՆՔԻ ՌԵԼԻԵՖԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԱՇՎԱՐԿԻ

1. Տեղանքի ռելիեֆի գործակիցը՝ η -ն, ընդունվում է հավասար 1-ի, եթե տվյալ տնտեսավարող սուբյեկտի ամենաբարձր ադոտոման աղբյուրի բարձրության 50-ապատիկ շառավղով (բայց ոչ պակաս, քան երկու կիլոմետր) տարածքում բարձրությունների տարբերությունը մեկ կիլոմետրի վրա չի գերազանցում 50 մետրը: Տարբերության արժեքները որոշվում են տվյալ տեղանքի ֆարտեզագրական նյութի վերլուծության հիման վրա:

2. Եթե դիտարկվող արտանետման աղբյուրների (տնտեսավարող սուբյեկտի արտադրական հրապարակի) մոտակայքում (ամենաբարձր ադոտոման աղբյուրի բարձրության 50-ապատիկ շառավղով, բայց ոչ պակաս, քան երկու կիլոմետր) կարելի է առանձնացնել մեկուսացված արգելիներ, որոնք ձգված են միևնույն ուղղությամբ (լեռնաժայռ, գոգավորություն, խոռոչ, խուր), ապա ռելիեֆի գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\eta = 1 + \varphi_1 (\eta_m - 1),$$

որտեղ η_m -ը որոշվում է ըստ ստորև բերված աղյուսակի՝ կախված ռելիեֆի ձևից, որի կարվածքները ներկայացված են նկար 1-ում, և չափողականություն չափեցող հետևյալ գործակիցներից՝ $n_1=H/h_0$ և $n_2=a_0$ (Ո₁-ը որոշվում է մինչև տասնորդական հետուքամբ, իսկ Ո₂-ը ամբողջ թվի հետուքամբ):

Այստեղ H -ը արտանետման աղբյուրի բարձրությունն է, h_0 -ն արգելիի բարձրությունն (խորությունն) է, a_0 -ն՝ ակոսի, խոռոչի կամ խուրի կողային լանջի կիսալայնությունը, X_0 -ն՝ արգելիի մեջտեղից՝ ակոսի կամ խոռոչի դեպքում, և լանջի վերին եզրից՝ խուրի դեպքում, մինչև արտանետման աղբյուրը եղած հեռավորությունը՝ ինչպես նշված է նկար 1-ում:

Աղյուսակ

n ₁	Խոռոչ (իջվածք)				Խուր				Ակոս (բարձունք)			
	n ₂											
	4-5	6-9	10-15	16-20	4-5	6-9	10-15	16-20	4-5	6-9	10-15	16-20
< 0.5	4.0	2.0	1.6	1.3	3.5	1.8	1.5	1.2	3.0	1.5	1.4	1.2
0.6 - 1	3.0	1.6	1.5	1.2	2.7	1.5	1.3	1.2	2.2	1.4	1.3	1.0
1.1 - 2.9	1.8	1.5	1.4	1.1	1.6	1.4	1.2	1.1	1.4	1.3	1.2	1.0
3 - 5	1.4	1.3	1.2	1.0	1.3	1.2	1.1	1.0	1.2	1.2	1.1	1.0
> 5	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0


φ_1 ֆունկցիայի արժեքն է $\frac{|\Delta x|}{a_0}$ հարաբերակցություններից՝ ըստ

գրաֆիկների (տե՛ս նկար 1.), որոնք համապատասխանում են ուելիեֆի տարբեր ձևերին: Եթե աղբյուրը տեղակայված է խորքի վերին սարահարթին, որպես Φ_1 ֆունկցիայի

$$\text{արգումենտ} \quad \frac{|x_0|}{a_0} \quad \text{փոխարեն ընդունվում է} \quad \frac{|x_0|}{a_0} :$$

Եթե արգելիներն իրենցից ներկայացնում են մեկ ուղղությամբ ձգված բարձունքներ կամ իջվածքներ, ապա h_0 և a_0 արժեքները որոշվում են այդ ուղղությանն ուղղահայաց լայնակի կտրվածքի համար: Եթե մեկուսացված արգելի իրենց ներկայացնում է առանձին բլուր (իջվածք), ապա h_0 -ն ընդունվում է հավասար արգելի առավելագույն բարձրությանը (խորությանը), իսկ σ_2 -ը՝ հաշվարկվում է աղբյուրի դիմաց ընկած լանջի համար:

Այն արտանետման աղբյուրների համար, որոնք տեղակայված են մի քանի մեկուսացված արգելիների ազդեցության գոտում, որոշվում են η արժեքները յուրաքանչյուր արգելի համար, և օգտագործվում է նրանցից առավելագույնը:



Նկար 1.

Առավել բարդ տեղանքի ուելիեֆի կամ բարձրությունների ավելի քան 250 մետր մեկ կիլոմետրի վրա տարբերությունների դեպքերում η արժեքն ընդունել 4:

(անտեսավարդ սուբյեկտի անվանումը)

Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծ

Տնօրեն _____

(անունը, ազգանունը)

201__ թ.

Կատարողների ցուցակ